

ԳԼՈՒԽ Խ.

1 Յաղագս Վարազայ թե ո՛րպէս կամ զիա՛րդ առաքեցաւ ի թագաւորէն Պարսից, եւ սատակեցաւ ի Մանուէլէ իբրեւ զառաջինս:

2 Ապա յետ այսորիկ Վարազ ոմն զաւրավար թագաւորին Պարսից գայր հասանէր ութուտասն բիւրու յերկիրն Յայոց, տալ պատերազմ ընդ Մանուէլի ընդ սպարապետին, եւ ընդ ամենայն զնոյն Յայոց: 3 Ապա կազմէր պատրաստէր սպարապետն զաւրավարն Յայոց Մանուէլ հեծեալս սպառազէս տասն հազար, եւ եկեալ տայր պատերազմ ընդ Վարազայ: 4 Հարկանէր եւ սատակէր, ջնջէր զնոսա ի միջոյ, եւ գլխովին զՎարազն սպանանէր. թափէր զկապուտ սաստիկ, զգարդ եւ զզէն զաւրացն, եւ դառնայր մեծաւ խաղաղութեամբ:

ԳԼՈՒԽ ԽԱ.

1 Յաղագս Մռկանայ՝ զոր առաքեաց դարձեալ թագաւորն Պարսից ի վերայ երկիրն Յայոց եւ ի վերայ Մանուէլի զաւրաւք բազմաւք, եւ սատակէր ի Մանուէլէ իբրեւ զառաջինս:

2 Եւ եղեւ յետ այսր ամենայնի առաքեաց թագաւորն Պարսից զՄռկանն քառասուն բիւրու ի վերայ երկրին Յայոց: 3 Եկն եհաս հանդերձ ամենայն բազմութեամբ զաւրաց իւրոց յերկիրն Յայոց, եւ եառ զկողմն մի զերկիրն Յայոց. եւ բանակեալ էր յԱրտանդան դաշտին: 4 Անկանէր ի վերայ բանակին Մանուէլն ի գիշերի, եւ անդէն առ հասարակ ընդ սուր հաներ զամենեսեան ի դակիշն, եւ զՄռկանն սպանանէր, եւ թափէր աւար բազում. եւ ոչ զմի ոչ ապրեցուցանէր ի նոցանէն:

ԳԼՈՒԽ ԽԲ.

1 Յաղագս խաղաղութեան ամս եւթն:

2 Եւ յետ այսորիկ ամս եւթն, եւ այլ ոչ եւս յաւելին զաւրքն Պարսից ժտել ինչ մտանել ի սահմանս Յայոց. եւ եղեւ խաղաղութիւն երկրին: 3 Եւ ժողովեցան առ զաւրավարն Մանուէլ ամենայն ցրուեալք երկրին. եկին անգան<sup>1</sup> այր յայր, եւ էին բանակեալ յանհոգս. եւ զաւրավարն Յայոց Մանուէլ առաջնորդէր նոցա: 4 Եկին ապա եւ մնացորդք ի տանէն Սիւնեաց պատանեակք երեք մնացեալք ի կոտորածէն Պարսից՝ առ զաւրավարն Յայոց Մանուէլ. եւ անուանք նոցա միւսումն Բաբիկ<sup>2</sup>, եւ միւսումն Սամ, միւսումն Վաղինակ: 5 Եւ ընկալաւ զնոսա զաւրավարն Յայոց Մանուէլ. եւ եղեւ նոցա աւգնական, եւ դարձ արար նոցա յերկիրն իւրեանց. եւ կացոյց տէր զԲաբիկ ի վերայ երկ-

1 *Օրինակ մի՝* եկին յԱյրարատ

2 *Օրինակ մի՝* միոյն